

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Ակունք համայնք, Փող. 1, շենք 25, հեռ. 094-93-55-03
Էլ. փոստ՝ akunq.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» Ապրիլի 2020 թվականի N 12

ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՅԻԱ ՄՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ « ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ « ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 1ՓՈՂ. 6 ՆՐԲ/ 3 –ՐԴ ՏՆԻՑ ՄԻՆՁԵ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՄԿԶԲՆԱՄԱՍ ,7-ՐԴ ՓՈՂՈՑ, 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԵՎ 1ՓՈՂ ԵԿԵՂԵՅՈՒՑ ՄԻՆՁԵ» ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ »ՄԱՏՈՒՌ, 7-ՐԴ ՓՈՂՈՑԻՑ ԱԶ ԹԵՔՎՈՂ /ԴԵՊԻ ՎԵՐ/ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑ ԿԱՑՄԱՆ ԵՎ ԼԵԴ ԼԱՄՊԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՅԻԱՅԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով Ակունք համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված « Համայնքի մշակույթի տան վերանորոգում» և « Ակունք համայնքի 1 փող. 6 նրբ /3-րդ տնից մինչև 3-րդ փողոցի սկզբնամաս ,7-րդ փող. , 10-րդ փողոց , 1 փող եկեղեցուց մինչև «Թուխ մանուկ » մատուռ , 7-րդ փողոցից աջ թեքվող /դեպի վեր / հատվածների լուսավորության անց կացման և ԼԵԴ լամպերի ձեռք բերման աշխատանքներ » / այսուհետ՝ ծրագրեր / սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի :

2. Սահմանել , որ

- 1) Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը :
- 2) Ծրագրերի ներկայացման համար համայնքի 2020թ. բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված՝ ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար :
- 3) Ծրագրերի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը , դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է համայնքի ղեկավարը :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ - 4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0


Ավագանի՝

Ա. Հովհաննիսյան

Ա. Թադևոսյան

Ա. Սաֆարյան

Ս. Աղաբեկյան



Ակունք համայնքի ղեկավար՝



Լ. Մանուկյան